Արձանագրություն N 2
ՀՀ առողջապահության նախարարության 2018 թվականի կարիքների համար անհրաժեշտ տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/27-4» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «02» «Մայիսի» 2018թ.
ժամը 14:45

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ Գ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամներ Գ.Պողոսյան
Մ.Մխիթարյան

Հանձնաժողովի քարտուղար Հ.Մնացականյան

1. Ընթացակարգի հայտերի բացման մասին

(Գ.Հարությունյան)

Ընդունել ի գիտություն, որ 07.04.18թ. հրապարակվել է հրավեր armeps համակարգում: Հայտերի բացումը՝ 16.04.18թ. ժամը 14:45:

Հայտ է ներկայացրել ներքոհիշյալ կազմակերպությունը.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«Էքսպրես Շին» ՍՊԸ	Express.shinllc@gmail.com	04423377

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Գ.Հարությունյան)

Մասնակցի կողմից ներկայացված ծրարում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Գ.Հարությունյան)

Մասնակցի կողմից ներկայացված ծրարը կազմված է հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Գ.Հարությունյան)

Հարցումներ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Բանակցությունների վարման մասին

(Գ.Հարությունյան)

«ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/27-1» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Էքսպրես Շին» ՍՊԸ-ն հրավիրվել է բանակցությունների՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.17թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները: Բանակցությունները տեղի են ունեցել 2018 թվականի ապրիլի 20-ին ժամը 15:45-ին:

Բանակցություններին «Էքսպրես Շին» ՍՊԸ-ն ներկայացրել է նոր գնային առաջարկ՝2-րդ չափաբաժնի մասով /կցվում է/:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Գ.Հարությունյան)

Կազմակերպության կողմից ներկայացված գնային առաջարկները մինչ բանակցությունները և բանակցություններից հետո կցվում է կից հավելվածներով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:

7. Առաջին տեղերն զբաղեցրած մասնակիցներին որոշելու մասին

(Գ.Հարությունյան)

«ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/27-4» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Էքսպրես Շին» ՍՊԸ-ն՝ 1-ին չափաբաժնի մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

8. ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցման ներկայացման մասին

(Գ.Հարությունյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ որոշվեց ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնել «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/27-4» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Էքսպրես Շին» ՍՊԸ-ին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը ներկայացված գնային առաջարկից պակաս չլինելու և հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա

ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը ակտիվների հաշվեկշռային արժեքին չգերազանցելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

9.Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի ենթակետերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին

(Գ.Հարությունյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի պահանջները՝ որոշվեց առաջարկել «Էքսպրես Շին» ՍՊԸ-ին՝ ծանուցման պահից 3 աշխատանքային օրվա /07.05.18թ. ժամը 18:00/ ընթացքում ներկայացնել՝ իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

10. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Գ.Հարությունյան)

«ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/27-4» ծածկագրով գնման ընթացակարգի հաջորդ նիստը տեղի կունենա Կառավարական թիվ 3 շենքում, փոքր դահլիճում ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից հարցման եզրակացությունը և «Էքսպրես Շին» ՍՊԸ-ի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Գ.Հարությունյան

Անդամներ՝ _____ Գ.Պողոսյան

_____ Մ. Մխիթարյան

Քարտուղար՝ _____ Հ. Մնացականյան

ՀՀ	CPV	Անվանումը	Չափի միավորը	Միավոր գին	Քանակ	Գումար	Մասնակիցների անվանումները և գնային առաջարկները				
							«Էքսպրես Շին» ՍՊԸ				
							միավոր գին ԱԱՀ	միավոր գին առանց ԱԱՀ	գինը առանց ԱԱՀ	ԱԱՀ	գինը ԱԱՀ-ով
«ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/27-4» ծածկագրով գնման ընթացակարգ /մինչև բանակցությունները/											
1	31531210/1	էլեկտրական լամպ,60W, 80W, 100W	հատ	84.00	227	19,068	99.00	82.50	18,727.50	3,745.50	22,473.00

ՀՀ	CPV	Անվանումը	Չափի միավորը	Միավոր գին	Քանակ	Գումար	Մասնակիցների անվանումները և գնային առաջարկները				
							«Էքսպրես Շին» ՍՊԸ				
							միավոր գին ԱԱՀ	միավոր գին առանց ԱԱՀ	գինը առանց ԱԱՀ	ԱԱՀ	գինը ԱԱՀ-ով
«ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/27-4» ծածկագրով գնման ընթացակարգ /բանակցություններից հետո/											
1	31531210/1	էլեկտրական լամպ,60W, 80W, 100W	հատ	84.00	227	19,068	84.00	70.00	15,890.00	3,178.00	19,068.00